

**ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**

**«ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ», «ԼԻՑԵՆԶԱՎՈՐ-ՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ**

1.	<b>Անհրաժեշտությունը</b>
	<p>«Ճարտարապետական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում ճարտարապետական գործունեությանն առնչվող իրավահարաբերությունների հստակեցման, տարբեր բարդության քաղաքաշինական փաստաթղթերի մշակման գործընթացի կանոնակարգման առանձնահատկությունները սահմանելու անհրաժեշտությամբ:</p> <p>Իրավական առումով օրենքի ընդունման անհրաժեշտությունը հիմնավորվում է նախ և առաջ Առևտրի համաշխարհային կազմակերպությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության փաստով, քանի որ «Ծառայությունների առևտուր» գլխավոր համաձայնագրում ճարտարապետական և ճարտարագիտական ծառայությունները դասվում են մասնագիտական գործունեությունների շարքին, իսկ նման գործունեության իրավունքը ամբողջ աշխարհում տրվում է մասնագետ ֆիզիկական անձանց՝ որոշակի արտոնագրման ընթացակարգերին մասնակցելու միջոցով:</p> <p>ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2013թ. սեպտեմբերի 19-ի N 874-Ն հրամանով հաստատված՝ «Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչ» փաստաթղթով ճարտարապետությունն ընդգրկված է «M-Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն» խմբում:</p> <p>Ի դեպ՝ շինարարությունն առանձին (F) խմբով է ներկայացված:</p> <p>Օրենքի նախագծի մշակման ընթացքում ուսումնասիրվել է միջազգային փորձը: Մասնավորապես՝ ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Ավստրալիայի, Կանադայի, Չեխիայի, Լեհաստանի, Բուլղարիայի և այլ երկրների: Ռուսական մասնագիտական հանդեսներում հատկապես հանգամանալից ներկայացված է Ամերիկայի Միացյալ Նահանգների ճարտարապետական գործունեության կարգավորման փորձը (հղումներ՝ <a href="http://geum.ru/next/art-93873.php">http://geum.ru/next/art-93873.php</a>; <a href="http://archpeter.ru/arkhiv/2012/06/k-voprosu-o-sozdanii-sistemy-nepreryvnogo-professionalnogo-arkhitekturnogo-obrazovaniya-v-rossii/">http://archpeter.ru/arkhiv/2012/06/k-voprosu-o-sozdanii-sistemy-nepreryvnogo-professionalnogo-arkhitekturnogo-obrazovaniya-v-rossii/</a> ; <a href="http://www.stroy-ua.net/arkhytektura-y-hradostroytelstvo/news.html">http://www.stroy-ua.net/arkhytektura-y-hradostroytelstvo/news.html</a> ; <a href="http://old.uar.ru/architecture/articles/1067/">http://old.uar.ru/architecture/articles/1067/</a>; <a href="http://refdb.ru/look/1921268.html">http://refdb.ru/look/1921268.html</a> ):</p> <p>Իրենց տարբերություններով ու յուրահատկություններով հանդերձ, բոլոր երկրներում գործում են միևնույն սկզբունքները, որոնցից ամենահիմնականը ոլորտը կարգավորող մասնագիտական միավորման առկայությունն է: Դրանք տարբեր երկրներում տարբեր անվանումներ ունեն, սակայն կազմավորման և գործելու սկզբունքները նույնն են.</p> <ul style="list-style-type: none"> <li>○ ֆիզիկական անձանց անդամակցության վրա հիմնված ոչ առևտրային, ոչ կառավարական հաստատություններ են (ինստիտուտ, միություն, պալատ, և այլն),</li> <li>○ գործում են ինքնակարգավորման սկզբունքով, օրենքի հիման վրա,</li> <li>○ ազգային, համապետական ընդգրկում ունեն, այսինքն այդ լիազորություն-</li> </ul>

ներով միակն են երկրում:

Բացառապես այդ կազմակերպություններն են, որ իրականացնում են արտոնագրում և գրանցում (ճարտարապետների ռեեստրի վարում), հաստատում են էթիկայի կանոնները և վերահսկում դրանց կատարումը, մշակում են անընդհատ ուսուցման ծրագրերը և կազմակերպում դասընթացները, սահմանում են շրջանավարտների պրակտիկայի կանոնները, կազմակերպում և հետևում են դրանց պատշաճ անցկացմանը, մշակում են պայմանագրերի օրինակելի ձևեր, աշխատանքների և ծառայությունների գնահատման մեթոդական ցուցումներ, միջոցներ են ձեռնարկում դեմպինգային քաղաքականության իրականացման ուղղությամբ և այլն:

Բոլոր այս կազմակերպություններն անդամ են Ճարտարապետների միջազգային միության (UIA\_ International Union OF Architects), որի Համաձայնագրի ստանդարտներում (բնագիրը՝ Accord on Recommended International Standards of Professionalism in Architectural Practice, ռուսերեն օրիգինալ թարգմանությունը՝ Соглашение МСА по рекомендуемым международным стандартам профессионализма в архитектурной практике) հանգամանալից շարադրված են ճարտարապետի մասնագիտական գործունեության հիմնարար սկզբունքները, հասկացություններն ու ստանդարտները, որոնք հնարավորություն են ստեղծում փոխադարձ ճանաչման, մասնագետների ու ծառայությունների ազատ փոխանակման համար: Հիմնական սկզբունքներն են՝

- 1) Ճարտարապետը հիմնական գործող անձն է և կրում է ճարտարապետական գործունեության ընթացքի և արդյունքի ողջ պատասխանատվությունը
- 2) Որպեսզի ճարտարապետը կարողանա ինքնուրույն գործունեություն ծավալել նա պետք է ձեռք բերի **ճարտարապետի կոչում**, բավարարելով որոշակի պահանջների, այն է՝
  - ա) կրթություն ակրեդիտացված ծրագրով, ակրեդիտացված ԲՈՒՀ-ում
  - բ) աշխատանքային պրակտիկա (ինտերն) որոշակի ժամկետով (3-5տարի)
  - գ) քննություն արտոնագիր ստանալու համար
  - դ) արտոնագրում և գրանցում
- 3) Անընդհատ ուսուցման պահանջը՝ արտոնագրված ճարտարապետը պարտավոր է տարվա ընթացքում որոշակի ժամաքանակ տրամադրել կատարելագործման դասընթացներին (Եվրոպայում՝ 35ժամ)
- 4) Կազմակերպությունը հաստատում է մասնագիտական էթիկայի կանոններ, որոնք պարտադիր են տվյալ երկրում գործող բոլոր ճարտարապետների համար:

Ի հարկե տարբեր երկրների օրենսդրությունը զարգացման տարբեր ճանապարհ է անցել, ընդ որում շատ երկրներում ճարտարապետության մասնագիտական կարգավորման խնդիրը երբևէ պետական լիազորություն չի եղել: Բրիտանական ճարտարապետների թագավորական ինստիտուտը-RIBA-հիմնադրված 1834թ., Ամերիկյան ճարտարապետների ինստիտուտը-AIA-1857թ., Ֆրանսիայի ճարտարապետների օրդենը-Ordre des architects և այլ երկրների համանման կազմակերպությունները միակն են իրենց երկրում, գործում են օրենքի հիման վրա և կարգավորում են մասնագիտության ամբողջ ընթացքը, սկսած կրթությունից վերջացրած արտոնագրմամբ և անընդհատ ուսուցման կազմակերպմամբ, մշակում և հաստատում են տեխնիկական նորմատիվներ ու ազգային ստանդարտներ:

Ռուսաստանի Դաշնությունում 2010 թվականից դադարեցվել է պետական լիցենզավորումը և հիմնադրվել Ինքնակարգավորվող կազմակերպությունների համակարգը (Саморегулируемые организации\_СРО), իր ազգային և ռեգիոնալ մակարդակներով: Սկզբունքն այն է, որ գործունեություն ծավալելու թույլտվության (допуск) է տրամադրվում իրավաբանական անձանց: Սա ըստ էության տվյալ ոլորտում տնտեսավարման թույլտվություն է, որը միջազգային պրակտիկայում ճարտարապետական գործու-

	<p>նեության նկատմամբ չի կիրառվում: Ֆիզիկական անձանց արտոնագրման համակարգի ներդրման նպատակով ՌԴ ճարտարապետների միության նախաձեռնությամբ հիմնադրվել և 06.05.2013թ. գրանցվել է ՌԴ ճարտարապետների ազգային պալատը (Национальная Палата Архитекторов <a href="http://npa.org.ru/npa/">http://npa.org.ru/npa/</a>):</p> <p>Ինքնակարգավորվող կազմակերպությունների համակարգեր են ներդրվում նաև Ուկրաինայում և Բելառուսում:</p> <p>Հայաստանի Հանրապետությունը նույնպես համանման օրենսդրական փորձի կիրառման օրինակներ ունի, մասնավորապես՝ ՀՀ դատական օրենսգրքում հաշտարարների վերաբերյալ կամ «Սնանկության մասին» ՀՀ օրենքում սնանկության գործերով կառավարիչների վերաբերյալ իրավական մեխանիզմները:</p> <p>«ճարտարապետական գործունեության մասին» ՀՀ օրենքի նախագծում ճարտարապետի մասնագիտական գործունեության արտոնագրման վերաբերյալ նախատեսվող դրույթներից բխող մոտեցումներն ամրագրված են «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերում:</p>
<p><b>2.</b></p>	<p><b>Ընթացիկ իրավիճակը և խնդիրները</b></p> <p>Հայաստանի Հանրապետությունում քաղաքաշինական գործունեության հիմնադրույթներն ու այդ գործունեության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և դրա կիրարկումն ապահովող իրավական ակտերով:</p> <p>Դրա հետ մեկտեղ, հստակեցման կարիք ունեն ճարտարապետական մասնագիտական գործունեության կազմակերպմանն առնչվող մի շարք խնդիրներ, ինչպիսիք են՝ Հայաստանի Հանրապետության կառավարության դասակարգմամբ՝ բարձր և բարձրագույն ռիսկայնության աստիճանի (կատեգորիայի) օբյեկտներին առնչվող՝ ճարտարապետական գործունեության արտոնագրման, մասնագիտական էթիկայի և վարվեցողության կանոնների, ինչպես նաև ճարտարապետի մասնագիտական իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ հարցերը:</p> <p>Քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներն ու լիցենզավորման հետ կապված հարաբերությունները սահմանվում և կարգավորում են «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով, իսկ լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ, արտոնագրեր (թույլտվություններ) տալու համար պետական տուրքի գանձման դրույքաչափերը սահմանվում են «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով: Սակայն գործող օրենքով չեն տարբերակված տարբեր բարդության ճարտարապետական նախագծեր մշակելու համար տրամադրվող լիցենզիաները և քաղաքաշինական փաստաթղթերի կազմում ներառվող բաժինների (ըստ դրանց մշակման բարդության, մասնավորապես՝ ճարտարապետական և կոնստրուկտորական մասերի, ինչպես նաև քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության) համար պետական տուրքի գանձման դրույքաչափերը:</p> <p>Ոստի անհրաժեշտություն է առաջանում գործող «Լիցենզավորման մասին» և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքները համապատասխանեցնել «Ճարտարապետական գործունեության մասին» ՀՀ օրենքի նախագծի պահանջներին:</p>
<p><b>3.</b></p>	<p><b>Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը</b></p> <p>Ոլորտը կարգավորող օրենսդրությամբ չեն կանոնակարգվում ճարտարապետների մասնագիտական գործունեությանն առնչվող մի շարք խնդիրներ: Մասնավորապես, ներկայումս ճարտարապետական մասնագիտական գործունեության իրավունքը չի նախատեսում համապատասխան մասնագիտական որակավորման պահանջ՝ կախված նախագծվող օբյեկտի բարդությունից, նշանակությունից կամ ծավալից, ինչը հաճախ հանգեցնում է քաղաքաշինական կենսամիջավայրի խեղաթյուրմանը, ոչ բա-</p>

	վարար որակական հատկանիշներ ունեցող ճարտարապետական նախագծերի իրագործմանը:
<b>4.</b>	<b>Կարգավորման նպատակը և բնույթը</b>
	<p>Նախագծի մշակման հիմնական նպատակն է՝ ապահովել կառուցապատվող միջավայրի, շենքերի ու շինությունների հարմարավետությունը, անվտանգությունն ու հուսալիությունը, ճարտարապետների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, ինչպես նաև քաղաքացու և հասարակության պաշտպանվածությունը ճարտարապետության ոլորտում ոչ արհեստավարժ գործունեության բացասական հետևանքներից:</p> <p>Հաշվի առնելով, որ ճարտարապետի մասնագիտական գործունեության արտոնագրմանն առնչվող դրույթներն առաջարկվում է կարգավորել «Ճարտարապետական գործունեության մասին» ՀՀ օրենքի նախագծով՝ անհրաժեշտություն է առաջացել համապատասխան փոփոխություն կատարել</p> <p>1. «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով սահմանված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների աղյուսակում (43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 17-րդ կետ): Միևնույն ժամանակ, վերոգրյալից բխում է քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննությունը որպես առանձին գործառույթ ներկայացնելու անհրաժեշտությունը՝ ելնելով քաղաքաշինական փաստաթղթերի մշակման փուլերի հաջորդականության տրամաբանությունից:</p> <p>2. «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 16-րդ կետում, որով սահմանվում են քաղաքաշինության բնագավառի լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու համար պետական տուրքի դրույքաչափերը: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով քաղաքաշինական փաստաթղթերի մշակման փուլերի հաջորդականության տրամաբանությունը, անհրաժեշտություն է առաջացել քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննությունը ներկայացնել որպես առանձին գործառույթ: Նշված կետը լրացվել է նոր 16.1.1 ենթակետով, որով տարանջատվել է քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության համար գանձվող տարեկան տուրքի դրույքաչափը:</p>
<b>5.</b>	<b>Նախագծեր մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձիք</b>
	Նախագծերը մշակվել է ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի և Հայաստանի ճարտարապետների միավորման հետ համատեղ:
<b>6.</b>	<b>Ակնկալվող արդյունքը</b>
	«Ճարտարապետական գործունեության մասին», «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի ընդունմամբ ակնկալվում է ճարտարապետական գործունեության մասնագիտական որակի բարձրացում, բնագավառում առողջ մրցակցության ստեղծում:
<b>7.</b>	<b>Հասարակությանը նախագծի վերաբերյալ իրազեկումը.</b>
	«Ճարտարապետական գործունեության մասին», «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը տեղադրվել է ՀՀ քաղաքաշինության նախարարության կայքում / <a href="http://www.minurban.am/">www.minurban.am/</a> :